ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

կնքված պայմանագրում կատարված փոփոխությունների մասին

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն, որը գտնվում է ք. Երևան, Հանրապետության հրապարակ, կառավարական տուն 3 հասցեում ստորև ներկայացնում է իր կարիքների համար ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքին Բազմաբերդ բնակավայրի դպրոցի նորոգման աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 18.05.2026թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 գնման պայմանագրում 24.06.2026թ. կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ	ՀՀ կառավարության 25.12.2025թ. N1910-Ն որոշում
Փոփոխության նկարագրություն	Ֆինանսական միջոցների հատկացում:
Փոփոխության հիմնավորում	Պայմանագրի 8.5 և 8.15 կետեր:

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1
18.05.2026թ. կնքված N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 գնման պայմանագրի

ք. Երևան «24» «06» 2026թ.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն (այսուհետ՝ Պատվիրատու), ի դեմս կոմիտեի գլխավոր քարտուղար Վ. Հարությունյանի, որը գործում է կոմիտեի կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ-ն (այսուհետ՝ Կապալառու), ի դեմս տնօրեն Ն. Հարությունյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր), հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2025 թվականի դեկտեմբերի 25-ի N 1910-Ն որոշումը և **ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքին Բազմաբերդ բնակավայրի դպրոցի նորոգման աշխատանքների** կատարման համար Կողմերի միջև 18.05.2026թ. կնքված ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 8.5 և 8.15 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին.

1. Համաձայնագրի առարկան

1.1 Կողմերը որոշեցին՝ Պայմանագիրը լրացնել նոր N 3 հավելվածով՝ համաձայն Համաձայնագրի հավելվածի:

2. Այլ պայմաններ

2.1 Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Համաձայնագրում Կողմերի համար չնշված՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները մնում են անփոփոխ:

2.3 Համաձայնագիրը և Համաձայնագրի հավելվածը կազմված են մեկական էջից, կնքվում են երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Համաձայնագրի հավելվածը համարվում է Համաձայնագրի անբաժանելի մասը: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011057859
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

Վ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, Բուժական 5փ., 6 փկղ. 1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220183333537000
ՀՎՀՀ 03563013

Տնօրեն՝

Ն. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
18.05.2026թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 գնման պայմանագրի
«24» «06» 2026թ. կնքված N 1 համաձայնագրի

«Հավելված N 3
18.05.2026թ. կնքված
N ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3 գնման պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի														
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2026թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում											
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	45461100/518	ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Ներքին Բազմաբերդ բնակավայրի դպրոցի նորոգման աշխատանքներ	-	-	-	-	-	94 500 000	250 000 000	250 000 000	250 000 000	315 000 000	315 000 000	315 000 000	**315 000 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: »:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ քաղաքաշինության կոմիտե
ք. Երևան, Հանրապետության հրապարակ
կառավարական տուն 3
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011057859
ՀՎՀՀ 02565827
Գլխավոր քարտուղար՝

Կ. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ

«Հարությունյան Շին Գրուպ» ՍՊԸ
Կոտայքի մարզ, Բուժական 5փ., 6 փկղ. 1
«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ
Հ/Հ 220183333537000
ՀՎՀՀ 03563013

Տնօրեն՝

Ն. Հարությունյան
(ստորագրություն)
Կ.Տ.

23 հունիսի 2026թ. Թիվ 018-241

ԲԱՆԿԱՅԻՆ ԵՐԱՇԽԻՔ
ԹԻՎ 23 18 40 731605/17

(պայմանագրի ապահովում)

1. Սույն երաշխիքը (այսուհետ՝ Երաշխիք) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ՝ Բենեֆիցիար) և «ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի (այսուհետ՝ Պրինցիպալ) միջև թիվ «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3» պայմանագրից (այսուհետ՝ Պայմանագիր) բխող Պրինցիպալի պարտավորությունների (այսուհետ՝ Երաշխավորված պարտավորություններ) կատարման ապահովում:

2. Երաշխիքով «ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ-ն (այսուհետ՝ Երաշխիք տվող անձ) պարտավորվում է Բենեֆիցիարի՝ սույն Երաշխիքով սահմանված կարգով և ժամկետում ներկայացված պահանջով (այսուհետ՝ Պահանջ) Բենեֆիցիարին անվերապահորեն վճարել 57.347.000 (հիսունյոթ միլիոն երեք հարյուր քառասունյոթ հազար) ՀՀ դրամ (այսուհետ՝ Երաշխիքի գումար) Պահանջը ստանալուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում: Վճարումը կատարվում է Բենեֆիցիարի կողմից նշված հաշվեհամարին փոխանցման միջոցով:

3. Սույն Երաշխիքն անհետկանչելի է:

4. Սույն Երաշխիքից բխող Բենեֆիցիարի՝ Երաշխիքի գումարի վճարումը պահանջելու իրավունքը կարող է փոխանցվել այլ անձի Երաշխիք տվող անձի գրավոր համաձայնության դեպքում:

5. Երաշխիքը գործում է թողարկման պահից և ուժի մեջ է մինչև 31 մարտի 2028թ.-ը ներառյալ: Սույն Երաշխիքի բնօրինակից արտատպված տարբերակը Երաշխիք տվող անձը Երաշխիքը տրամադրելու օրն իր պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեից ուղարկում է նաև սույն Երաշխիքի 1-ին կետում նշված պայմանագրի կնքման նպատակով կազմակերպված գնման ընթացակարգի հրավերում նշված գնահատող հանձնաժողովի քարտուղարի էլեկտրոնային փոստի հասցեին:

6. Բենեֆիցիարը Պահանջը ներկայացնում է Երաշխիք տվող անձին գրավոր ձևով: Պահանջին կից ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1) N «ՀՀՔԿ-ՀԲՄԱՇՁԲ-26/3» պայմանագրի, ներառյալ նաև դրանում կատարված փոփոխությունների, լրացուցիչ համաձայնագրերի պատճենները,

2) Բենեֆիցիարի կողմից պայմանագիրը միակողմանի լուծելու մասին www.procurement.am հասցեով գործող տեղեկագրում հրապարակած ծանուցումը:

7. Երաշխիք տվող անձը Բենեֆիցիարի կողմից ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերն ստանալուց հետո առավելագույնը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում քննարկում է ներկայացված Պահանջը և կից փաստաթղթերը՝ սույն Երաշխիքի պայմաններին դրանց համապատասխանությունը պարզելու համար:

8. Երաշխիք տվող անձը մերժում է Բենեֆիցիարի Պահանջը, եթե.

1) Պահանջը կամ կից փաստաթղթերը չեն համապատասխանում սույն Երաշխիքի պայմաններին,

2) Պահանջը ներկայացվել է Երաշխիքով սահմանված ժամկետի ավարտից հետո:

9. Երաշխիք տվող անձը Պահանջը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում անհապաղ, բայց ոչ ուշ, քան նույն աշխատանքային օրը մերժման մասին տեղեկացնում է Բենեֆիցիարին:

10. Սույն Երաշխիքի նկատմամբ կիրառվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի համապատասխան դրույթները:

11. Սույն Երաշխիքի կապակցությամբ ծագող վեճերը ենթակա են լուծման Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Եղվարդ» մասնաճյուղի կառավարիչ Ա. Պողոսյան

Կատարող
Գայանե Գալստյան
Հեռ. 010 31-88-88 (ներքին 8251)

Fw: «ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

От Movses Ayvazyan <Movses.Ayvazyan@acba.am>
Кому a.manucharyan@minurban.am <a.manucharyan@minurban.am>
Дата 2026-06-23 15:59

018-241.pdf (~885 КБ)

Movses Ayvazyan

SME Business Advisor

"Yeghvard" Branch

Head Office | 82-84 Aram str., 0002 Yerevan, RA

Office +374 10 31 88 88

Mobile + +37494700853

Movses.Ayvazyan@acba.am

www.acba.am

Սա Ակբան է: Իմ, քո, մեր Վստահության շրջանը:

This is Acba. My, your, our Circle of Trust.

Խնդրում ենք պահպանել բնությունը և տպել այս նամակը խիստ անհրաժեշտության դեպքում:

Please consider the environment and do not print this email.

This email and its attachments are only for the intended recipient. If you received this by mistake, please notify the sender and delete it.

Sharing or using this info is not allowed. Acba bank is not responsible for the security of this message.

From: Heriknaz Harutyunyan
Sent: 23 June 2026 15:12
To: Gayane Galstyanv; Movses Ayvazyan
Subject: Re: «ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՇԻՆ ԳՐՈՒՊ» ՍՊԸ

Heriknaz Harutyunyan

Operations Specialist

"Yeghvard" Branch

Head Office | 82-84 Aram str., 0002 Yerevan, RA

Office +374 10 31 88 88

Heriknaz.Harutyunyan@acba.am

www.acba.am

Սա Ակբան է: Իմ, քո, մեր Վստահության շրջանը:

This is Acba. My, your, our Circle of Trust.

Խնդրում ենք պահպանել բնությունը և տպել այս նամակը խիստ անհրաժեշտության դեպքում:

Please consider the environment and do not print this email.

This email and its attachments are only for the intended recipient. If you received this by mistake, please notify the sender and delete it.

Sharing or using this info is not allowed. Acba bank is not responsible for the security of this message.